25.154.

Խ. Ս. Հ. Մ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ԽՆԱՅԴՐԱ-
ՄԱՐԿՂԻՆ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻՆ ՈՃԱՆԴԱԿՈՂ ԿԵՆՏ-
ՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՃԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԻՎԱՌՈՒՄ

(Սեռերին ոժանդակող հանձնաժողովի որոշակիի ծրագիր)

ԳՅՈՒՂՐԱՏ
1934
ՅԵՐԵՎԱՆ

Библиотека
Института
Экспериментальной
Академии Наук
СССР

332
Ո-26

332
Ռ-26

34-Ա
Ցա 569

05 JAN 20

ԽՆԱՅԳՈՐԾԻՆ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻՆ ՈՃԱՆԴԱԿՈՂ ԲՈԼՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

Խնայզործին և Պետվարկին ոժանդակող հանձնաժողովները աճեցին և ամրացան խորհրդային փոխառությունների համար մղվող պայքարում։

Իրենց կոլեկտիվների աշխատավորության մեջ բաժնեգրության իսկական անցկացնողները լինելով, ոժանդակ հանձնաժողովները «Յերկրորդ հնգամյակի փոխառության» կամպանիայի ընթացքում մասսայական աշխատանքի հարուստ փորձ ձեռք բերին։

Առաջին հնգամյակի վերջին տարում, նամանավանդ «պարտատոմսատիրոջ որ»-վա հիման վրա, ոժանդակող հանձնաժողովները մեծ փորձ կուտակեցին նաև պարտատոմսատեր աշխատավորների սպասարկման գործում, ցույց տալով այդ գործում խոշոր ձեռներեցություն, կիրառելով զանազան ձևեր և մեթոդներ, որոնց ոգնությամբ պարտատոմսատեր աշխատավորին հասցվում է փոխառությունից ստացվող ոգուտները։

Ոժանդակ հանձնաժողովների յերկրորդ հիմնական անելիքը փոխառության աշխատանքների հետ մեկտեղ,—դա Մյուության խնայողական գործի զարգացմանը համարակական ոժանդակություն ցույց տալն է։

Խնայդրամարկղները, ինչպես և պետական փո-

10 OCT 2013

25.154

խառուցվածքները, սոցիալիզմի շինարարության հաջող աշխատավորության միջոցների մոբիլիզացիայի կարևորագույն լծակներն են։ Խորհրդային Միության պայմաններում, լայն մասսաների քաղաքական ակտիվության և առաջին հնգամյակը չորս տարում հաջողությամբ կատարելու հետևանքով, նրանց նյութական պայմանների խոշոր վերելքի հիման վրա, խնայդրամարկղները զարգանալու հսկայական հնարավորություններ ունեն։

Չնայած դրան, խնայողական գործը մինչև որս հետ է մնում այդ հնարավորություններից, և այն պահանջներից, որոնք առաջադրում է նրան սոցիալիստական շինարարությունը։

Աշխատավորության անձնական յեկամուտներից ավանդ ներգրավելու և ավանդատուներին անընդհատ սպասարկելու գործում, խնայդրամարկղների թույլ աշխատանքի պատճառներից մեկն ել այն է, որ ոժանդակող հանձնաժողովները, որոնք պետական փոխառություններին հսկայական հաջողություններ են ապահովել, չեն զբաղվում խնայդրամարկղների աշխատանքների լավացման գործում։

Կուսակցությունը և կառավարությունը խնայդրամարկղների առաջ այժմ խոշոր և պատասխանատու խնդիրներ են դրել։ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թվի հունիսի 20-ի որոշումը՝ խնայդրամարկղներին պարտավորեցնում է՝ ապահովել բնակչության ավանդների ներգրավումը և արմատապես լավացնել աշխատավոր ավանդատուներին սպասարկելու գործը։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Կ. Մեսրոպի անվան
Ա. Мясникян
56056-66

Անհրաժեշտ է պայքարել խնայդրամարկղի այնպիսի ակտիվ անդամ ունենալու համար, որոնք իր բոլոր ազատ միջոցներն ու խնայողությունները կպահի խնայդրամարկղում։

Սոցիալիստական շինարարության այս բնագավառի խնդիրների կատարման հսկայական պատասխանատվությունն ընկնում է ոժանդակ հանձնաժողովների վրա։

Պետք է արմատապես փոխել ոժանդակ հանձնաժողովների վերաբերմունքը խնայդրամարկղների նկատմամբ, կազմակերպել ոժանդակ հանձնաժողովների ամենորյա և սիստեմատիկ աշխատանքը և նրանց պայքարն աշխատավորության ավանդները լայն կերպով ներգրավելու, ակտիվ ավանդատուներ ունենալու և ավանդատվին որինակելի ձևով սպասարկող խորհրդային կուլտուրական խնայդրամարկղների համար։

Այդ պատճառով Միության ԿԳԿ կից պետավարկին և խնայդործին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովը ձեր ուշադրությունն է հրավիրում խնայդործի աշխատանքների նկատմամբ և սկսած ստորինից, բոլոր ոժանդակ հանձնաժողովներին առաջարկում է լայն կերպով ոգնել խնայդրամարկղներին ավանդային գործարքները լայնացնելու և լավացնելու համար, այդ գործի մեջ ներգրավելով ոժանդակ հանձնաժողովների ամբողջ հասարակայնության տեսակետն ու վոգևորությունը, որոնք ձեռք են բերվել փոխառության աշխատանքներում։

Այդ աշխատանքն սկսելու համար կենտրոնական

Ա. Мясникян
Սեմյոնիկյանի անվան

ոժանդակ հանձնաժողովը ուղարկում է ստորին ոժանդակ հանձնաժողովի աշխատանքի որինակելի պլանը։

Ներկա որինակելի պլանը նպատակ ունի ոգնել ստորին ոժանդակ հանձնաժողովին խնայողության գործի շուրջն իր ամենորյա աշխատանքը կազմակերպելու համար։

Նա միայն որինակելի պլան է, և այդ պատճառով պետք է հարմարեցվի տեղական առանձնահատկություններին և յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողովի կոնկրետ պայմաններին։

Այս պլանը պետք է հիմք դառնա խնայգործի ասպարեզում, ոժանդակ հանձնաժողովի ամենորյա աշխատանքը տանելու համար։

Յուրաքանչյուր պլանի հաջողության հիմնական պայմանը, դա նրա կատարման ստուգումն է։

Այդ պատճառով էլ կատարման ստուգումը մըտցրվել է այս պլանի մեջ որպես նրա բաղադրիչ մաս։ Պլանի ամեն մի բաժնում նախատեսված է պլանով նախատեսված հանձնարարությունների կատարման ստուգումը։

Կենտրոնական ոժանդակ հանձնաժողովը խրդրում է ներկա պլանի հիման վրա, փոխառության կամպանիաների ընթացքում ցույց տված տեմպերով և լարվածությամբ ծավալել աշխատանքները խնայգործի ասպարեզում։

ԽՍՀՄ ԿԳԿ կից Կենտրոնական Ոժանդակող
Հանձնաժողովի նախագահ՝ ՉՈՒՑԿԱՑԵՎ

ՍՏՈՐԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

1. ՊԱՇԳՐԱՐ ԱԿՏԻՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆ ՀԱՄԱՐ

Միությունում խնայդրամարկղներում 10 միլիոնից ավելի ավանդատուներ կան, վորոնք 5 ռուբլուց պակաս ավանդ ունեն։ Նման հսկայական քանակի մանր հաշիվների առկայությունը միայն ծանրաբեռնում է խնայդրամարկղներին և խանգարում է ակտիվ ավանդատուների միշտ և իրական սպասարկելուն։ Միաժամանակ այն աշխատավորները, վորոնք խնայդրամարկղի միայն ձևական ավանդատուներ են և այդ ավանդում պահում են միայն 1, 2, 3, ռուբլի առանց խնայդրամարկղներից ոգտվելու լուրջ նպատակ ունենալու, պետությանը եյական ոգուտ չեն տալիս։

1933 թվի սեպտեմբերի մեկից խնայդրամարկղի ավանդի նվազագույնը չափը սահմանվում է 5 ռուբլի (մինչև այժմյան մեկ ռուբլու փոխարեն)։

Խնայդրամարկղների և յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողովի խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի խնայդրամարկղներում պահել և ամրացնել 35

ռուբլուց պակաս ունեցող ավանդատուներին, բարձրացնելով նրանց ավանդի չափը ավելի կա, ավելացնելով ավանդատուների քանակը։

Դրա համար ամեն մի ոժանդակ հանձնաժողով իր կոլեկտիվում, աշխատավորների մեջ պետք է ծավալի լայն բացատրական աշխատանք, լոզունգ ունենալով «յուրաքանչյուր աշխատավոր պետք է խնայդրամարկղի ակտիվ ավանդատու լինի, պահի այնտեղ իր բոլոր խնայողություններն ու ազատ միջոցները և իր կենցաղի մեջ խելամտորեն ոգտվի խնայդրամարկղի ծառայություններից»։

№ №	Միջոցառումներ	կատարող	ժամկետ
1	ա) Կուսակազմակերպության բ) գործարկոմի առաջ հարց դնել խնայդրամարկղների մասսայականացման և կոլեկտիվի անդամներին խնայդրամարկղ ներդրավելու մասին։		
2	Գումարել պատվարկի ակտիվի նիստ, տեղեկացնել նրան խնայողության գործի բնագավառում խնդիրների մասին, հրահանգել աշխատավորությանը խնայդրամարկղ ներդրավելու և ավանդի չափն ավելացնելու և խնայդրամարկղի ծառայություններից խելամիտ ոգտվելու ագիտացիայի մեթոդների և ձևերի մասին։ Սոցմրցման սկզբունքների հիման վրա ցեխերում կազմակերպել ագիտատոր—հավաքագրողների աշխատանքները։		
3	Ճաշի ընդմիջումներին ցեխերում և բրիգադներում թռուցիկ միտինգներ անցկացնել բանվորությանը		

№ №	Միջոցառումներ	կատարող	ժամկետ
	խնայդրամարկղներում լայն մասնակից դարձնելու և ավանդների չափն ավելացնելու հարցով, բացատրելով բանվորության խորհրդային խնայդրամարկղների ակտիվ ավանդատուի համար մղվող պայքարի հյուրության և խնայդրամարկղի ծառայություններից ոգտվելու յեղանակների մասին։		
4	Կոլեկտիվի ընդհանուր ժողով գումարել, զեկուցում դնել սոցիալիստական շինարարության գործում խնայդրամարկղի ունեցած դերի, խնայդրամարկղի ավանդատուին տրվող ոգուտների և կոլեկտիվի անդամների խնայդրդրամարկղներում վորպես ակտիվ ավանդատու մասնակցելու մասին։ Ժողովը կազմակերպված ձևով նախապատրաստել, ապահովելով նրա մասսայական լինելը և մասնակցողների ակտիվությունը։		
5	Հին ավանդատուների կոնֆերանս կազմակերպել, քննելով խնայդրամարկղների աշխատանքների թերությունները և նրա լավացումը, ապահովելով կոնֆերանսի մասնակիցների կուլտուրական սպասարկումը (ակումբում գեղարվեստական ներկայացմամբ և այլն)։		
6	Նախապատրաստել և անհատական նամակներ ուղարկել ա) վոչ ավանդատու և բ) վոչ ակտիվ ավանդատու բանվոր-ծառայողներին։		
7	Գայմանավորվել բազմատիրաժ և պատի թերթերի խմբագրի հետ և ապահովել ակտիվ ավանդատուին նվիրվող բազմատիրաժի հատուկ եջ և պատի թերթի հատուկ անկյուն լույս ընծայելը։		

56056-66

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
8	Կազմակերպել թերթերում խնայդրամարկղի հին ավանդատու բանվորների յելույթների գետեղելը։ Կազմակերպել տեղական ռադիոյի միջոցով խնայդրամարկղների մասին ինֆորմացիոն տեղեկություններ և բոլոր ազատ միջոցները խնայդրամարկղում պահելու ազատ նյութերի սիստեմատիկ հաղորդում (լոզունգ ունենալով՝ «Յուրաքանչյուր աշխատավոր պետք է խնայդրամարկղի ակտիվ անդամ լինի և խելամիտ կերպով ոգտվի նրա ծառայություններից»)։		

Կատարման սուղման կարգով

Ոժանդակ հանձնաժողովի նիստում (պլանի առանձին կետերում նշանակված ժամկետներում) լսել՝

ա) Առանձին ակտիվիստ-ագիտատորներին իրենց աշխատանքների և առանձին ցեխերի և բրիգադների բանվոր-ծառայողների խնայդրամարկղ ընդգրկելու գործի դրության մասին։

Լսել . . . . . ցեխին

Ժամկետ . . . . . .

բ) Ավանդատուների կոնֆերանսի նախապատրաստման, ապա և դրա անցկացնելու հետևանքների մասին (նպատակ ունենալով հաշվառել և տարածել այդ փորձը)

Ժամկետ . . . . . .

գ) Ակտիվ ավանդատվի հարցի մասսայականացման վերաբերյալ բազմատիրաժի, պատի թերթի և ռադիոյի աշխատանքների մասին։

Ժամկետ . . . . . .

Զ. ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Խնայդրամարկղի ավանդատուներին սպասարկելու գործը մինչև որս անբավարար է դրված։ ԽՍՀՄ ԺԿԽ հունիսի 20-ի վորոշման մեջ՝ «Պետաշխնայդրամարկղների սիստեմի աշխատանքների մասին» ուղղակի ասված է՝ «ավանդատուների և պարտատոմսատերերի սպասարկումը խնայդրամարկղների կողմից անբավարար է կազմակերպված»։ Մինչդեռ ավանդատուների կանոնավոր սպասարկելը խնայդրամարկղի իրական ակտիվ ավանդատու ունենալու առաջնակարգ պայմանն է հանդիսանում։ Այդ պատճառով ահա վճռական բեկում պետք է սաեղծել ավանդատուին խնայդրամարկղի կողմից սպասարկելու գործում։

Յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողով պարտավոր է մտածել վոչ միայն պարտատոմս պահողի, այլ և խնայդրամարկղի ավանդատուի մասին. նա պետք է հասարակական հսկողություն սահմանի խնայդրամարկղի աշխատանքների նկատմամբ, վճռականորեն պայքարելով խնայդրամարկղում յեղած քաշքշուկների և բյուրոկրատիզմի դեմ, պետք է կոլեկտիվում տարածի խնայդրամարկղների տեղեկանքային գործը, ավանդատուներին սպասարկման գործում ոգտագործելով պարտատոմսատերերի սպասարկման փորձն ու ձևերը։

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
1	Կազմակերպել կոլեկտիվում պարտատոմսատիրոջ և ավանդատուի անկյուն Կոլեկտիվում պարտատոմսատիրոջ անկյուն լինելու դեպքում անպայման առանձնացնել համապատասխան տեղ և խնայգործի հարցերին։		

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
2	Կազմակերպել տվյալ կոլեկտիվին սպասարկիչ խնայդրամարկղի հասարակական ստուգատես՝ ա) Առանձնացնել ակտիվիստների բրիգադ, խնայդրամարկղի աշխատանքներն ստուգելու համար։ բ) Սահմանել տվյալ խնայդրամարկղում կոլեկտիվի ստուգիչ պոստ (նշանակելով ակտիվիստների հերթական հերթապահություն, հերթապահության ժամերը և այլն)։ գ) Ստուգել խնայդրամարկղների բողոքի գիրքը, հայտնաբերել բնորոշ բողոքները, որոնք տրտացուցում են խնայդրամարկղի հիմնական թերությունները և խնայդրամարկղի վերաբերմունքը դեպի այդ բողոքը։ դ) Ձևակերպել խնայդրամարկղն ստուգող բրիգադի լեզրակացությունները։ ե) Ստուգման լեզրակացությունները ու նյութերն ուղարկել վերադաս խնայդրամարկղին։		
3	Պայմանավորվել կոլեկտիվի և խնայդրամարկղի հետ, խնայդրամարկղի աշխատանքների և կոլեկտիվի ակտիվի մեջ ցալ ժողող դումարելու մասին քննելու համար ստուգող բրիգադի լեզրակացությունները։		
4	Խնայդրամարկղի հետ մշակել և կոլեկտիվի անդամների մեջ անցկացնել հարցաթերթ նրանց խնայդրամարկղի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և վերջիններս ավանդատուներին սպասարկելու գործում ունեցած թերությունների մասին (պարզել՝ ինչը չի բավարարում ավանդատուներին, ինչ պահանջներ ունեն նրանք) մշակված նյութերը, անկետաները և լեզրակացությունները հասցնել ի գիտություն հասարակական կազմակերպության, վերադաս ոժանդակ հանձնաժողովին ու խնայդրամարկղին։		

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
	Անկետային հետազոտության արդյունքները լուսաբանել բազմատիրաժ և պատի թերթերում։		
5	Պայմանավորվել խնայդրամարկղի հետ, վորոշ որերում և ժամերում, շրջիկ խնայդրամարկղ կազմակերպել, ավանդատուներին իրենց աշխատանքի վայրում սպասարկելու համար։		
6	Այս մասին լայն կեղով տեղեկացնել կոլեկտիվին։ Ոժանդակ հանձնաժողովում կազմակերպել խնայդրամարկղների ավանդատուների բողոքների մշտական ընդունում՝ վատ սպասարկման, բյուրոկրատիզմի, քաշքշուկի և այլն մասին, ապահովելով ոժանդակ հանձնաժողովի ակտիվիստների միջոցով տրված բողոքների շտապ քննությունը և աշխատանքում նկատված թերությունների վերացման միջոցների ձեռնարկումը։		

Կատարման ստուգման կարգով

Ոժանդակ հանձնաժողովի նիստում լսել կատարողների հաշվետվությունը։

ա) Անկյան դրության և աշխատանքների մասին.

Ժամկետ . . . . . .

բ) Բրիգադի առանձնացման, խնայդրամարկղի ստուգատեսի աշխատանքների մասին։

Ժամկետ . . . . . .

գ) Անկետան անցկացնելու նախապատրաստական աշխատանքի, նրա կոլեկտիվի անդամների մեջ տարածելու, հավաքելու և մշակելու ընթացքի մասին։

Ժամկետ . . . . . .

դ) Կոլեկտիվում շրջիկ խնայդրամարկղի աշխատանքի և այդ փորձի արդյունքների մասին։

Ժամկետ . . . . . .

3. ԳՅՈՒՂԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Կոլտնտեսական նոր գյուղն աշխատանքի վորակի հատուկ պահանջներ են առաջադրում։ Դա առանձնապես վերաբերում է գյուղխնայդրամարկղներին։ Անհրաժեշտ է բարձր աստիճանի վրա դնել գյուղխնայդրամարկղների աշխատանքը, վորպեսզի նրանք կարողանան ոգտագործել այն խոշոր հնարավորությունները, վորոնք ստեղծվել են պետվարկի ու խնայդրամարկղի համար կոլտնտեսական գյուղում, կոլտնտեսականների քաղաքական ակտիվության և նյութական դրության բարելավման վերելքի հետևանքով։

Ներկայումս գյուղխնայդրամարկղները թույլ են և վատ են աշխատում։ Գյուղական ցանցն ինքնուրույն չի կարող վարձ ժամանակամիջոցում լուծել իր առաջ դրած խնդիրները։ Այդ պատճառով լայն կամպանիա է անցկացվում քաղաքի կողմից գյուղխնայդրամարկղների ցանցին ոգնելու համար։ Խնայդրամարկղների դծով 2—3 ամսով գյուղ են ուղարկվում քաղաքային խնայդրամարկղների լավագույն աշխատողները։

Այդ կամպանիայի նպատակն է գյուղում կազմակերպել գյուղական բնակչության ավանդների նորգրավման պլանի կատարումը, գյուղական խնայդրամարկղներին տալ բաղմաթիվ փորձ յեվ սովորեցնել նրանց աշխատել։

Քաղաքային ոժանդակ հանձնաժողովները այդ կամպանիայում պետք է ակտիվ մասնակցություն ունենան և նրա վրա հենվելով ապահովեն գյուղոժանդակ հանձնաժողովների ամրացումը։

Զեռնարկին կից յուրաքանչյուր ստորին ոժանդակ հանձնաժողովի խնդիրն է այդ կամպանիայի ընթացքում գործնական ոգնություն ցույց տալ իր յենթաշեֆ շրջանի գյուղի կոլտնտեսության ոժանդակ հանձնաժողովին։

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
1	Պայմանավորվել քաղաքային դրամարկղի հետ և բրիգադայի կազմում առանձնացնել ոժանդակ հանձնաժողովի լավագույն ակտիվիստներին, վորոնք գյուղ պետք է գնան, գյուղ-խնայդրամարկղներին ոգնելու։		
	Հնարավորության դեպքում յենթաշեֆ կոլտնտեսություն (շրջան գյուղսորհուրդ) ուղարկել մի ինքնուրույն բրիգադա ամրացնելու կոլտնտեսության (գյուղական) ոժանդակ հանձնաժողովը, նրա աշխատանքները կազմակերպելու և աշխատանքներին ոգնելու համար։		
2	Գյուղ գնացող բրիգադի պարտականությունները		
	ա) Ստուգել յենթաշեֆ ոժանդակ հանձնաժողովի աշխատանքները և նրա անդորձունեության դեպքում ապահովել հանձնաժողովի վերընտրությունը։		
	բ) Ստուգել ոժանդակ հանձնաժողովի կազմը, նրա պատակ ունենալով առողջացնել և վտարել գյուղական ոժանդակ հանձնաժողով խցկված դասակարգորեն անհարազատ տարրերին։		
	գ) Հրահանգել ոժանդակ հանձնաժողովին հասարակական հսկողության կիրառման և պարտատոմսերի վաճառման ու դրամ դնելու թույլտվությունը։		

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
	ները ձևակերպելու կանոնների ու կարգի մասին։ գ) Ոգնել գյուղ ոժանդակ հանձնաժողովին, կազմակերպել կոլտնտ-բաժնեգրման մուծումների վրա հսկելու գործը (ստուգել, թե առանձին կոլտնտեսություններ համար սահմանվել են արդյոք մուծումների ժամկետներ, առանձնացվել են լիազորներ-մուծումները գանձելու, չեն մնում արդյոք գանձված գումարները լիազորների և գյուղխորհուրդների մոտ և այլն) ապա և փոխառությամբ ընդգրկել չբաժնեգրված կոլտնտեսականներին։ յ) Կազմակերպել ոժանդակ հանձնաժողովի ավանդատուներ ներգրավելու աշխատանքն ակտիվ ավանդատուի և անձնական ապահովագրման դաղափարը կոլտնտեսականների մեջ տարածելու համար։ զ) Կոլտնտեսական և գյուղական ոժանդակ հանձնաժողովների մեջ ավանդատուների ներգրավման լավագույն աշխատանքի սոցմրցում կազմակերպել, սոցմրցման մեջ առաջին տեղը ապահովելով իր յենթաշեֆ ոժանդակ հանձնաժողովին։ ե) Մշակել և գյուղի ոժանդակ հանձնաժողովին թողնել իր աշխատանքի կոնկրետ պլանը, փոխառության, ավանդների և անձնական ապահովագրության դծով։		
3	Գայթանավորվել կոլեկտիվի շեֆ ընկերության հետ ոգնելու յենթաշեֆ կոլտնտեսության (գյուղխորհրդին, շրջանին) լայն մասսայական աշխատանք ծավալել կոլտնտեսությունների և աշխատավոր մենատնտեսների ավանդները խնայդրամարկղ ներգրավելու և կոլտնտեսականներին կոլեկտիվ և անձնական ապահովագրությամբ ընդգրկելու համար, ոգտագործելով փոխառության կամպանիայի ժամանակ կիրառվող ոգնության ձևերը՝ բրիգադներին ուղարկելը, տեղում մասսայական ժողովներ, զրույցներ անցկացնելը, պատի թերթ հրատարակելը, պետական պարտատոմսերի շահումների ստուգման գործը կազմակերպելը և այլն։		
4	Կազմակերպել խնայդրամարկղների և անձնական ապահովագրության մասին կոլեկտիվի անունից յենթաշեֆ կոլտնտեսության (շրջանի, գյուղի) կոլտնտեսականներին և անհատ աշխատավորներին ուղղված կոչի հրապարակումը։		
5	Սոցմրցման և հարվածայնության հրավիրել քաղաքի, միմյանց մոտ գտնվող կոլեկտիվներին պայքարելու յենթաշեֆ գյուղական որինակելի ոժանդակ հանձնաժողովի համար, այս մասին կոչ գրել և կազմակերպել նրա հանձնումն ակտիվի միջոցով, հրապարակել տեղական և կամ մրցման հրավիրված կոլեկտիվի թերթում։		

Կատարման ստուգման կարգով՝

Ոժանդակ հանձնաժողովի նիստում լսել՝

ա) Այն ընկերոջ ինֆորմացիան, որ պատասխանատու է գյուղերը մարդ ուղարկելու գործը կազմակերպելու համար, ով և առանձնացվել գյուղ գնալու համար, ուր, յերբ և ինչ կարգով են մեկնելու։

Ժամկետ . . . . . .

բ) Խնայդրամարկղի բրիգադայի կազմում գտնվող գյուղ մեկ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ.ССР
Ա. Մասնայանի անվան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՍՍՀՄ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Академии Наук
СССР

նող ընկերների հաշվեհավությունը կամ ինքնուրույն բրիգադայի հաշվեհավությունը։

Ժամկետ . . . . . .

դ) Շեֆընկերության ինֆորմացիան դյուղ խնայդրամարկղներին ողնելու, կամպանիայի դրծում իր մասնակցության մասին։

Ժամկետ . . . . . .

դ) Այն ընկերոջ ինֆորմացիան, վոր պատասխանատու յե ուրիշ ոժանդակ հանձնաժողովների սոցմրցման կանչելու դրծը կազմակերպելու համար (կ. 5) այն մասին, թե յերբ, ինչպես և ինչ կարգով և հանձնվել կոչը, ինչ պատասխան և ավել հրավիրված կոլեկտիվը, ինչ միջոցներ պետք է ձեռք առնել մրցումը կատարելու համար։

Զ. ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆՆԵՐԻ ՄԵՋ

Մոսկվայի «Կրասնի բոգատիր» դրծարանում անց և կացվել հետաքրքիր փորձ։ Դրծարանի բազմատիրաժ թերթը հատուկ համար եր բաց թողել, նվիրելով այն արձակուրդ գնացող բանվորների մեջ մասսայականացնելու արձակուրդ գնալուց առաջ խնայդրամարկղում ավանդ թողնելու հարցը։

Թերթում բերել եյին առանձին բանվորների կարծիքն այդ հարցի շուրջը, վորոնցում նրանք ընդգծում եյին այդ հարցի ճիշտ դրվածքը, քանի վոր խնայդրամարկղում ավանդ ունենալը մեծ նշանակություն ունի արձակուրդից վերադարձող բանվորի համար։

«Կրասնի բոգատիր»-ի այդ փորձը նպատակահարմար և տարածել բոլոր ձեռնարկություններում. բանվոր արձակուրդայինները, առանձնապես պետվարկի և խնայդրծի ակտիվիստները, կարող են լայն կերպով ոգտագործվել նույնպես և իրենց արձակուրդի անցկացման վայրում, փոխադրության և խնայդրծի գծով աշխատելու համար։

Ոժանդակ հանձնաժողովը պետք է իր ակտիվիստ-արձակուրդայիններին այս ուղղությամբ հրահանգի և տա նրանց կոնկրետ ցուցմունքներ։

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
1	Նախապատրաստել և բաց թողնել (թերթիկ կամ բազմատիրաժ թերթում) հատուկ կոչ ուղղած արձակուրդ գնացող բանվոր-ծառայողներին արձակուրդ գնալուց առաջ խնայդրամարկղում ավանդ թողնելու մասին (արձակուրդից վերադառնալու առաջին շաբաթում ոգտագործելու համար)։ Այս հարցը լուսաբանել կոլեկտիվի պատի թերթում։		
2	Արձակուրդայիններին անհատական նամակներ ուղարկել խնայդրամարկղների մասին։		
3	Գումարել արձակուրդայինների ժողով, նրանց արձակուրդի ժամանակ յեղած վայրում, դյուղ ոժանդակող հանձնաժողովներին և խնայդրամարկղներին ողնելու մասին։		

Կատարման ստուգման կարգով՝

Ոժանդակ հանձնաժողովի նիստում լսել՝

ա) Արձակուրդայինների մեջ աշխատանք կազմակերպող պատասխանատու ընկերոջ ինֆորմացիան, իրեն արված հանձնարարության կատարման և նրա արդյունքների մասին։

Ժամկետ . . . . . .

բ) Արձակուրդից վերադարձող մի քանի արձակուրդային ակ-

Ս. Մ. Մ. Մ

տիվիստների հաշվետվությունները, նրանց հանձնարարած գյուղի փոխառության և խնայդրամարկղների աշխատանքների կատարման մասին։

Ժամկետ . . . . . .

5. ՈՂՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻՆ

Ոժանդակ հանձնաժողովը առանձին ուշադրություն պետք է դարձնի իր կոլեկտիվի խնայդրամարկղի աշխատանքներին (այնտեղ, ուր կա խնայդրամարկղ)։ Յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողով պետք է պայքարի իր խնայդրամարկղն օրինակելի դարձնելու համար։ Պետք է խնայդրամարկղի աշխատանքների նկատմամբ սիստեմատիկ հսկողություն ունենալ, ակտիվի ուժերով նրան պետք է ցույց տալ ամենօրյա ոգնություն։

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
1	Ստուգել խնայդրամարկղի շենքի դրությունը և անպետք լինելու դեպքում հարց հարուցել վարչության և հասարակական կազմակերպությունների առաջ շենքը փոխելու և կամ հարմարացնելու համար։		
2	Քաղաքային խնայդրամարկղի հետ պայմանավորվելով առանձնացնել (եթե այդ պետք է) հատուկ ընկերներ ոժանդակ հանձնաժողովի կազմի լավագույն ակտիվիստներից խնայդրամարկղում մշտապես աշխատելու համար։		
3	Խնայդրամարկղին ակտիվի ուժերով սիստեմատիկ ոգնություն ցույց տալ փոխառություն պահողներին		

№ №	Միջոցառումներ	Կատարող	Ժամկետ
	ապասարկելու համար (մասնավորապես յուրաքանչյուր խաղարկությունից հետո շահումների արագ ստուգում կատարելու գործում)։		
4	Կազմակերպել ոժանդակ հանձնաժողովի և ակտիվի մշտական մասնակցությունն իր խնայդրամարկղի ավանդատուների բողոքները քննելու։		

Կատարման ստուգման կարգով՝

Ոժանդակ հանձնաժողովի նիստում լսել՝

ա) Խնայդրամարկղի շենքի ստուգման համար առանձնացված ընկերոջ ինֆորմացիան ստուգման արդյունքների մասին։

Ժամկետ . . . . . .

բ) Խնայդրամարկղին ոգնելու համար առանձնացված ակտիվիստների—իրենց աշխատանքի հաշվետվությունը։

Ժամկետ . . . . . .

ՄԵՍ ... ГСС ... ZUUՈ-Арм.ССР Ա. ԻՄ. Ա. Մասիսյանի անվան ...

ՀՍՍՀ ... ԻՄ. Ա. Մասիսյանի անվան ... 36056·66

Խմբագրություն՝ Ա. Խաչատրյանի յեվ Ս. Բունյաթյանի
Թարգմանեց՝ Ս. Եղազյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Սարոյան
Սրբագրիչ՝ Սոս Հակոբյան
Հանձնվել է արտադրության 1933 թ. դեկտ. 11-ին
Ստորագրված է տպագրելու 1933 թ. դեկտ. 21-ին
Պատվեր № 533 Գրավիտ 9274 Տիրաժ 1000
ՑՍՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԱՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան
NL0204260

34-11
Са 569
110

2 Ր Ի

Работа Комиссий Содействия сберегательного дела.

Сельхозгиз 1934 Эривань